դէմքի վրայ նշմարում էի ճշմարիտ վարժապետի ուրախութիւնը, երբ սիրած աշակերտի մէջ մի փոքրիկ յառաջադիմութիւն է նկատում: Նա դարձեալ գրկեց ինձ, ասելով.

— Քո մէջ միտք կայ, Ֆարհատ: Դու բաւական զարգացել ես:

— Այդ մարդուն եմ պարտական: — Ես ցոյց տոի Ասլանի վրայ:

Նա գրասեղանի վրայից գլուխը բարձրացրեց եւ գոհունակութեամբ ժպտաց, չգիտեմ, իմ յայտնած շնորհակալութեան համար, թէ նրա համար, որ դժուարին խնդիրը լուծուեցաւ: Վերջինը պէտք է հաւանական լինէր, որովհետեւ նա մատիտը դարձեալ ցած դրեց եւ ինքն իրան ասաց. «հիմայ դուրս եկաւ»...

Որպէս յետոյ իմացայ, Ասլանը հաշւում էր, թէ որքա՞ն ծախք է հարկաւոր, եթէ մինչեւ Դատոնի նաւահանգիստը սայլակի հարթ ճանապարհ շինոի, եւ որքա՞ն ժամանակ է հարկաւոր մի այդպիսի ճանապարհ պատրաստելու համար:

Ես տէր հօր նկարագրութիւններից առաջուց այնքան շատ տեղեկութիւններ էի ստացել վարժապետի դպրոցի, սենեակների, կացութեան, սովորութիւնների եւ առհասարակ նրա կեանքի մասին, որ այժմ ինձ մնում էր միայն ստուգել, թէ որքան ճշմարիտ էին նրանք: Մի հայեացք բաւական էր բոլորը ստուգելու համար: Ամէն ինչ ակներեւ էր: Բայց նրա դպրոցը, կացարանը, նրա տարօրինաւկ սովորութիւնները եւ նրա ամբողջ գործունէութիւնը, որ տէր հօր զարմացք էին պատճառում եւ մինչեւ անգամ օտարոտի էին թւում, ընդհակառակն, ինձ վրայ բոլորովին այլ տպաւորութիւն էին գործում: Ես այդ բոլորի մէջ տեսնում էի իմ անձնազոհ միսիոնարի առաքելութիւն՝ անկիրթ ժողովրդի մէջ: Այդ առաքելութիւնը՝ իր ինքնուրոյն ձեւերով՝ ամենեւին միակողմանի նպատակ չունէր. նա այնքան բազմակողմանի էր, որքան բազմակողմանի էին ժողովրդի պէտքերը, որի կրթութեանը, որի բարօրութեանը նոիրել էր անխոնջ գործիչը իր անձը եւ իր գործունէութիւնը:

Բայց ինձ զբաղեցնում էր մի միտք. այն բոլորը, որ ես տեսայ, որ ես լսեցի, այն բոլորը, որ կատարոել էր այստեղ, չէր կարող փոքր ժամանակի աշխատութեան արդիւնք լինել: Այն օրից, որ ես վերջին անգամ բաժանոեցայ նրանից Որսորդի տանը, շատ ժամանակ չէր անցել: Միթէ՞ այդքան կարճ միջոցում կարելի էր այդքան շատ գործ կատարել: Անտարակոյս, նա շատ վաղուց յարաբերութիւններ ունէր այդ գիւղացիների հետ: Ռեսի տան խօսակցութիւններից երեւաց, որ նա գլխաւորապէս ձմեռն է պարապում երեխաների հետ, իսկ տարոայ միւս եղանակներում ազատ է: Այդ ազատ ժամանակ-